

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Նաիրա Զոհրաբյանի, Էլինար Վարդանյանի, Բազմասեր Առաքելյանի և Վահան Կարապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-505-28.04.2014-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է շրջանառության հարկ վճարողներին գործունեության առաջին երեք տարիներին ազատել առևտրական (առք ու վաճառքի), ինչպես նաև արտադրական գործունեությունից եկումուտների մասով շրջանառության հարկի վճարման պարտավորությունից:

Այդ կապակցությամբ հայտնում ենք.

1. Համաձայն շրջանառության հարկի համակարգում փոփոխություններ նախատեսող տարբեր օրենսդրական նախագծերի ու առաջարկությունների քննարկման շրջանակներում մեր կողմից մշտապես ներկայացված դիրքորոշման՝ միայն շրջանառության հարկի դրույքաչափի նվազեցումն անընդունելի է. դրույքաչափի նվազեցումը պետք է կատարվի ձեռքբերումները պարտադիր փաստաթղթավորելու պահանջի ներդրմամբ: Տվյալ դեպքում անընդունելի է նաև շրջանառության հարկ վճարողներին շրջանառության հարկի վճարումից ազատելը՝ առանց ձեռքբերումները պարտադիր փաստաթղթավորելու պահանջի ներդրման: Վերջինս անչափ կարևոր է, քանի որ փաստաթղթավորման պարտադիր պահանջի բացակայությունը հանգեցնում է խոշոր բիզնեսի իրական շրջանառությունների քողարկմանը: Այս առումով գտնում ենք, որ տնտեսությունում կատարվող գործարքների լիարժեք փաստաթղթավորման արդյունքում հնարավոր կլիներ ոչ միայն փոխհատուցել փոքր բիզնեսի կողմից վճարվող հարկերի նվազումը, այլև հարկման դաշտ բերել խոշոր բիզնեսի իրական շրջանառությունները:

Ներկայացված օրենքի նախագիծը ոչ միայն չի լուծում այս հարցը, այլև հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների՝ էական չարդարացված կորստի:

2. Հիմնավորված չէ օրենքի նախագծի ընդունման հիմնավորման մեջ ներկայացված այն փաստարկը, որի համաձայն՝ առևտրական (առք ու վաճառքի) և արտադրական գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողներին շրջանառության հարկի վճարումից ազատելը կհանգեցնի նոր աշխատատեղերի ստեղծմանը և կապահովի եկամտային հարկի լրացուցիչ մուտքեր: Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ շրջանառության հարկ վճարողների շուրջ 77 տոկոսը (շուրջ 38 հազ. հարկ վճարողներ) անհատ ձեռնարկատերեր են: Ակնհայտ է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին շրջանառության հարկի վճարումից ազատելու դեպքում նոր աշխատատեղերի

հաշվին եկամտային հարկի լրացուցիչ մուտքերով շրջանառության հարկի գծով մուտքերի նվազեցման փոխհատուցումը իրատեսական և հիմնավորված չէ:

3. Իրականությանը չի համապատասխանում նաև օրենքի նախագծի ընդունման հիմնավորման մեջ ներկայացված այն փաստարկը, որ, շրջանառության հարկի ներդրմամբ պայմանավորված, հանրապետությունում փակվել է շուրջ 4000 փոքր օբյեկտ, տասնյակ հազարավոր տնտեսավարող սուբյեկտներ գործում են կամ վնասով, կամ ցածր շահութաբերությամբ:

Նախ, հարկ ենք համարում նշել, որ ներկայացված տվյալը գերազանցում է անգամ ընդհանրապես լուծարված սուբյեկտների թիվը: Ընդ որում, նույն 2013 թվականի ընթացքում պետական գրանցում են ստացել (ստեղծվել են) բազմաթիվ նոր տնտեսավարող սուբյեկտներ:

Միաժամանակ, տեղին է նշել, որ, ընդհանուր առմամբ, շրջանառության հարկի ներդրմամբ պայմանավորված, հարկային բեռը համահունչ է մինչև շրջանառության հարկի ներդրումը ձևավորվող հարկային բեռի մակարդակին՝ հաշվի առնելով շրջանառության հարկ վճարողներին 11 տոկոս եկամտային հարկի պահումից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումից ազատելու, առաքվող կամ տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր չվարելու, հարկային հաշվառումը նկատելիորեն պարզեցնելու և հաշվառման ծախսերը կրճատելու հնարավորությունը, իսկ անհատ ձեռնարկատերերի համար նաև՝ 2013 թվականի հունվարի 1-ից, «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պայմանավորված, ամսական ընդամենը 5000 դրամ գումարի չափով եկամտային հարկի սահմանումը, որը միասնական հարկ է, ներառում է մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները (այսինքն՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո

անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարներ չեն կատարվում):

Հաշվի առնելով նշվածը՝ կարծում ենք, որ օրենքի նախագծի ընդունման հիմնավորման մեջ նշված՝ «տասնյակ հազարավոր» փոքր օբյեկտների կողմից «վնասով» կամ «ցածր շահութաբերությամբ» գործունեություն ծավալելը կարող է պայմանավորված լինել այլ գործոններով, բայց ոչ՝ շրջանառության հարկի ներդրմամբ:

Օրենքի նախագծում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վախթանգ Միրումյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եզրակացություն

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է սահմանել արտոնություն շրջանառություն հարկ վճարողների համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **բացասական ազդեցություն**:

Նախագծով նախատեսվում է առևտրի, ծառայությունների և արտադրության ոլորտի տարեկան մինչև 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարող սուբյեկտներին երեք տարով ազատել շրջանառության հարկից: Նման ձևաչափով ներկայացված Նախագիծը չի լուծում ՓՄՁ-ների գործունեության հետագա խթանման, ինչպես նաև աշխատատեղերի պահպանման կամ նոր աշխատատեղերի ստեղծման խնդիրը, իսկ միջազգային պրակտիկայում հարկերի վճարումից ազատումը չի համարվում ՓՄՁ-ների գործունեության խթանմանն ուղղված արդյունավետ հարկային քաղաքականություն:

ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Շրջանառության հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Շրջանառության հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
(այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների,
ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների
վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա
բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը
կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի
հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող
հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական
վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության
բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է շրջանառության հարկ վճարողներին գործունեության առաջին երեք տարիներին ազատել առևտրական (առք ու վաճառքի), ինչպես նաև արտադրական գործունեությունից եկամուտների մասով շրջանառության հարկի վճարման պարտավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը կհանգեցնի պետական բյուջեի եկամուտների նկատելի կորստի:

Միաժամանակ, հայտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-505-28.04.2014-S<-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-236 օրենքը լրացնել նոր 7.1 հոդվածով՝ հետեյալ բովանդակությամբ.

«Հոդված 7.1 Շրջանառության հարկի արտոնությունները

1. Շրջանառության հարկ վճարողները այդպիսին համարվելու հաշվետու շրջանի առաջին օրացուցային օրվանից երեք անընդմեջ տարով ազատվում են առետրական (առք ու վաճառքի) եւ արտադրական գործունեությունից եկամուտների մասով շրջանառության հարկ վճարելուց:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հոկտեմբերի 1-ից եւ տարածվում դրանից հետո հաշվեգրված եկամուտների վրա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սույն օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է տարեկան մինչեւ 58.35 մլն. դրամ շրջանառություն ունեցող ՀՀ առետրի ոլորտի ձեռնարկությունների գործունեության հետագա խթանման, շահութաբերության բարձրացման, ինչպես նաեւ այդ տնտեսվարող սուբյեկտներում առկա աշխատատեղերի պահպանման, նոր աշխատատեղերի ստեղծման, առավել բարենպաստ ձեռնարկատիրական միջավայրի ձեւավորման անհրաժեշտությամբ:

Ակնհայտ է, որ 2013թ. հունվարի 1-ից ՀՀ-ում «Շրջանառության հարկի մասին» օրենքի գործողության մեջ դնելուց հետո հանրապետության փոքր եւ միջին ձեռնարկատիրության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ առետրի, ծառայությունների եւ արդյունաբերության բնագավառներում, շուրջ 4000 փոքր օբյեկտներ փակվել են, տասնյակ հազարավոր տնտեսավորող սուբյեկտներ գործում են կամ վնասով, կամ ցածր շահութաբերությամբ: Ի թիվս այլ գործոնների՝ այս իրավիճակի ստեղծման վրա իր բացասական ազդեցությունն են թողել շրջանառության հարկի գործող դրույքաչափերը:

Ուստի, ներկայացվող օրենքի նախագծով առաջարկվում է երեք տարով՝ սկսած 2014թ. հոկտեմբերի 1-ից՝ առետրի, ծառայությունների եւ արտադրության ոլորտի տարեկան մինչեւ 58.35 մլն դրամ շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ազատել շրջանառության հարկից: Միաժամանակ նշենք, որ 2014թ. ՀՀ պետական բյուջեի մասին օրենքում, շրջանառության հարկի գծով մուտքերը նախատեսված են շուրջ 16 մլրդ դրամ: Կարծում ենք, որ հարկային այսպիսի արտոնության կիրառումը էապես կխթանի գործող աշխատատեղերի պահպանման եւ նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացները, որի արդյունքում էլ միայն եկամտային հարկերի լրացուցիչ մուտքերը կգերազանցեն 16 մլրդ դրամը: Դրա հետ միասին էապես կբարելավվի ՓՄՁ ոլորտի ներդրումային միջավայրը:

Ինչ վերաբերում է արդեն իսկ գործող 2014թ. վերջին եռամսյակի շրջանառության հարկից ակնկալվող մուտքերի կրճատմանը, ապա այն առավելագույնը կկազմի 2 մլրդ դրամ, որը կփոխհատուցվի վերոնշյալ գործոններով, նաեւ այլ աղբյուրների հաշվին:

